Վէղիրին։ Իրրեւ յանձն առին նոքա հաճութեամբ կատարել զհրամանն, գրով հաստատեաց զմիաբանութիւնս նոցա և արձակեաց։

Իսկ Գրիգոր Պատրիարք 'ի Կիւրակէի Գալստեան, որ օր Մաղկազարդ էր Ցունաց, առաքեաց զամենայն ուխտաւորս և զժողովուրդս Հայոց 'ի լեառն Զիթենեաց եւ ետ կատարել անդ պատարագ հանդիսաւոր 'ի վերայ Համբարձման տանտեղոյն Քրիստոսի, եւ յաւուրն երկրորդի առաքեաց զնոսա 'ի Ցորդանան գետ, եւ դարձան անտի խաղաղութեամբ յերուսաղէմ։ (Զայս սովորութիւն խափանեալ են այժմ Հայք, միայն 'ի տարւոջ միանգամ տան բերել ջուր 'ի գետոյ անտի՝ և բաժանեն ուխտաւորաց. իսկ Ցոյնք ցարդ պահեն զսովորութիւնս իւրեանց, և 'ի տարւոջ միանգամ տանեն անդ զուխտաւորս)։

Եւ 'ի հասանիլ տօնի Պասեքին Ցունաց՝ եկեալ ոստիկանին և այլ մեծամեծացն այլազգեաց՝ նստան 'ի դուռն տաճարին Ս. Յարութեան 'ի զգուշութիւն՝ եւ չթողուլ զոք 'ի Հայոց մտանել 'ի ներքս ըստ հրամանին։ Թէպէտ և Գրիգոր Եղիայակիր յառաջադոյն յորդորական բանիւք և քաղցրախօս վարդապետութեամբ իւրով պատուիրեալ էր ժողովրդոց չգնալ ումեք և մի' երեւիլ անդ, զի մի' գուցէ կրեսցէ պատիժս՝ և ազգն ողջոյն երեւեսցի իրրեւ անհնազանդ։ Այնպէս հետեւեցան ժողովուրդք խրատուհովուի իւրեանց, մինչ զի չիմանալ ումեք թէ՝ զինչ գործեցին Ցոյնք 'ի Պասեքի իւրեանց։ Եւ այսպիսի եղանակաւ կատարեալ նոցա զՀատիկն՝ ելեալ գնացին 'ի տեղիս իւրեանց։

Եւ յաւուր յայնմիկ 'ի միջօրէի ետ բանալ Գրիգոր Պատրիարք զդուռն Տաճարին և գնացեալ անդ բազմութեամբ ուխտաւորաց, կատարեաց զտօն Մաղկազարդի մեծահանդէս փառօք, և դարձաւ 'ի վանս Ս. Յակոբայ։ Նոյնպէս կատարեաց անդ յաւուր Աւագ Ուրբաթու զխորհուրդ Զարշարանաց և Խաչելութեան Տեառն, թափօրական հանդիսիւ շրջելով 'ի բովանդակ անօրինական Տեղիս 'ի տաճարի անդ։ (Այս սովորութիւն Հայոց խափանեալէ այժմ, զոյն խորհուրդ կատարեն 'ի տաճարի Ս. Յակոբայ)։

Իսկ յաւուր Շաբաթու յերեկոյի Ճրագալուցի Զատկին,